Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

LGA
1166

6661

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԱՂԷՏԱԼԻ ԱՆՑԻՑ ԵՒ ԱՆԿԱՐԳՈՒԹԵԱՆՑ ՏԱՆՆ ԱՂԹԱՄԱՐԱՑ

ԳՐԵԱԼ ՅՈՎՍԷՓ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՎԱՆԱՀՕՐ
ՆԱՐԵԿԱՑ ՎԱՆԻՑ

ՎԱՐՈՍԼԻԱ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ռ. Յ. ՔԻՒՐՔՃԵԱՆ
—1873—

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ГОС. БИБЛИОТЕКА
ՀԱՅԿ-ԱՌՍՍՀ

Zf. 1168

9 1166. 60

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Յամի 1866 Նարեկայ Վանից Վանահայր Յուլիէի վարդապետ կուղղէ զայս «Տեղեկագիր ապէպալի անցից ի անկարգութենէն Տանն Աղթամարայ» առ Վեհափառ Հայրապետն ամենայն Հայոց 'ի Սուրբ Էջմիածին։

Սոյն Տեղեկագիրը Ազգային եկեղեցական պատմութեան վրայ ամենէն ոսկալի յաւելուած մ'է, մանաւանդ անոր համար յոյժ դատապարտելի, որ ապագայի մէջ նմանօրինակ եղեռնագործութեանց հրահանգ եւ պատճառ պիտի ըլլայ եթէ պէտք եղած անաչառ դատաստան չ'լինի, եւ այս հետեւանաց պատասխանատուութիւն անոնց վրայ պիտի ծանրանայ, որք Աղթամարայ Կաթուղիկոսական խնդրոյ լուծման մասնակցութիւն ունին։

Մենք թէ մեր խիղճ հանդարտեցնելու եւ թէ յիշեալ պաշտօնէից անդիտաբար վճիռներէ զգուշացնելու եւ խնդիրը կարելի եղածին չափ պարզաբանելու պարտաւորութեամբ կը հրատարակենք զայս։

Երբէք քննադատական առեան մը չը կրնար խնդրոյ մը քնական վիճակ դնել եթէ իրաց հանգամանքները բաղմակողմանի հայեցողութեամբ չը զննէ, եթէ ազդեցութեանց առաջ չընդդիմադրէ, եթէ պաղարիւնութեամբ եւ անկողմնակալութեամբ չ'վարուի, մանաւանդ թէ դատաստանի ենթարկելոյն կարեկցութիւն շարժող վիճակի նկատմամբ անգութ չ'լինի։ Քանզի դատաւորի անգթութիւն վրէժխնդիր արդարութիւն կը համարուի։

Որչափ՝ պատմական քննադատութեամբ ակնառոս պատմաբան Յուլէի վարպետի տեղեկագիրը ճշմարտապատում թուի մեզ տակաւին չենք վճռեր Խաչատուր Կաթողիկոսի յանցաւոր լինիլ, կրնայ եւ արդար ըլլալ, բայց ըստ մեր գիտութեան արդէն նա մեր Եկեղեցւոյ նոյն իսկ անուանման Նէրսէսեանց, կարգաց եւ կանոնաց առաջ դատապարտեալ է, եւ ասոր համար քննութիւն աւելորդ էր իսկ վերաքննութիւն բոլորովին յիմար, օրինակի համար Խաչատուր իւր նախորդի կենդանութեան կաթողիկոսանալուն վկայութիւն կամ քննութիւն պէտք է, ուր թողումք որ իր նախորդի անմիջապէս սպաննուիլ իւր Կաթողիկոսանալուն պտուղն է։

Եթէ Խաչատուր Կաթողիկոսի ներկայ վիճակը մեր անիրաւ ներողամտութիւն տղայական եւ կանացի արդահատութիւն կրնայ շարժել, որչափ պէտք էր զգացուէինք եթէ տեսնայինք մեր Եկեղեցւոյ ծերունի Հայրապետ մը ծուլի ափի վրայ նախատակոծ փռուած, երբ մեկ կողմէն Խաչատուր Փրտաց Ջուլիրներու հետ եւ ընդ հովանեաւ նոցա եկեղեցւոյ մէջ Կաթողիկոս կը ձեռնադրուի, իսկ միւս կողմէն իւր կենդանի Հայրը՝ Պետրոս Կաթողիկոս աֆոռի մէջ վերջին անարդութեամբ արիւնաթաթաւ կըլլայ. հօր արիւնով որդին կօծանի։

Արդարեւ մարդ մը չ'կրնար այնքան զգացողութիւն ունենալ անցքի մը նկատմամբ տակ լսելով որչափ նոյն անցքի տեղեաց եւ մարդոց ծանօթ եւ զայնս տեսած ըլլայ։

Աղթամարայ խնդրոյ Բաբէքէնց տեղեկաբեր Յանձնաժողովը աւելի ճշմարիտ եւ զգացողութեամբ պիտի տեղեկագրէր եթէ իրենցմէ մինն այն աղեռալի անցից ականատես լինէր, ինչպէս սոյն տեղեկաբեր Յուլէի վարդապետ։

Խաչատուր Կաթողիկոսի երկարամեայ տարապրութեան վիճակ զոմանս 'ի պարզամտաց յիմարեցուցած եւ պաշարած է այլ չենք յուսար որ այս յիմարութիւն եւ պաշարում Երեւիոխանական ժողովոյ վրան ալ կրնայ ազդել։

Մենք ամէն հետեւանք եւ պատասխանատուութիւն դա-

տաքնչաց թողով միայն սա չափ կ'ազդարարեմք՝ որ սաստիկ ձեռաղ ողբմած գլեաց քաջեիեղծ եւ պարզամիտ ըլլալէն առաջ արդարադատ եւ անաչառ ըլլալու է։

Իսկ թէ ինչէ Խաչատուրի ներկայ դրութիւն եւ նորա յիմարեցուցիչ եւ պաշարող միջոցներ զայն եւս ալիտի մեկնեմք այլ ոչ առ այժմ, որ Տէրէկոփէրէ խօսած առեն մեզ լռել պէտք է։

Առ Վեհափառ Տ. Տ. Գէորգ Սրբազան Կաթուղիկոսն Ամենայն Հայոց Աթոռակալ Սրբոց Թադէոսի և Բարդուղիմէոսի Առաքելոցն և Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին։

Ի Ս. Էջմիածին։

Քաջայայտ է որք զպատմութիւնս Հայոց իցեն ընթերցեալ՝ թէ ո՞րպիսի ոք է որ զհիմունս Աղթամարայ հաստատեաց՝ գադիկն նենդաւոր և աղգակործան, և թէ զիա՛րդ Կաթուղիկոսն Աղթամարայ ընդ նզովիւք վակեալ կայ չարաչար՝ 'ի Ս. Հայրապետաց Աղգիս, որպէս բանք ընդհանրականին ցուցանեն։ Սակայն ցարդ օծանի Կաթուղիկոս նստի և վարէ զայն պաշտօն արդար. և 'ի նզովս ժողովրդեան, 'ի խռովութիւն եկեղեցւոյ, 'ի նախատինս հաւատոյ և Լուսաւորչեան Ս. Աթոռոյն։ Այո՛, որչափ կայ այն Տուն, գոգցես կայ նա Աղգիս 'ի կործանումն։

Թողումք զհինն 'ի հինն. մեք զոր տեսաք իսկ աչօք մերօք միանգամ, համառօտ այլ ճշմարիտ հանգամանօք փութացուք ասա 'ի մէջ ածել, առ որ հրաւէրս ձայնից արձակեալ կոչեմ զազգս համօրէն հայել և լալ արտասուագին զմնացորդաց Հայոցս առիթ կորստեան. զխաւարին հոգւոցս. զաւերին տաճարացս, և զձեզ, ո՛վ Տէր Հոգևոր, որ զառաջնորդութիւն լուսատուին մերոյ Սրբոյն Գրիգորի 'ի ձեռինդ ունիս պարգևեալ։ Աստուծոյ, զՁեզ աղաչեմ հնարս հնարել վասն Աղթամարայ

և Կաթուղիկոսին և Կաթողիկոսութեան Նորուն ։ առաջ-
ուել ևս վասն տառապեալ, խաւարեալ և անտիրունչ լը-
քեալ ժողովրդականացն այնոցիկ կողմանց, որոց՝ չէ՛ ոք
Լուսաւորիչ, բաց 'ի Գրիգորէն, և չ'է այլ փրկիչ՝ բաց 'ի
ճշմարիտ փրկչէն Յիսուսէ, որպէս և Ս.մեծն Հայոց ։

Ս.յս է մեր ակնատես վկայութիւնն ։ — Ի 1835 թը-
ուականաւ ։ Յովհաննէս Կաթուղիկոսն Ս.ղթամարայ մե-
ռաւ, դեղ մահու տուեալ նմա միաբան եպիսկոպոսք և
վարդապետք տեղւոյն ։ Յաջորդ ամին Յովհաննու եղև
Կաթուղիկոս՝ խաչատուր Մոկացի, որ աքսորեցաւ ը-
նօրէնութեամբ Ս.ղգին 'ի Շապան Գարահիսար քաղաքն,
զամս երիս մնալով անտէն, դարձաւ յՍ.ղթամար 'ի ձեռն
Քրդաց ։ Խան Մահմուտ անուանի բռնաւոր Քուրդն
պաշտպան և հովանի էր նմա, և այն ինչ ըմբռնեցաւ
Խան Մահմուտն, Խաչատուրն ևս բարձաւ 'ի կենաց՝ առ-
եալ հարուած վայտատի յոտս իւր 'ի ձեռաց Յովհաննէս
վարդապետին, որ միաբան էր Ս.ղթամարայ, և զամիսս
երիս բեկեալ ոտիւք ծառայեալ 'ի մահիճս ցաւոց, մե-
ռաւ 'ի նմին կղզւոջն ։

Յետ այսորիկ, որպէս ձեռն Օսմանեան Տէրութեան
ձգեալ հասոյց 'ի խորս Քիւրտիսթանու զբարեկարգու-
թիւն քաղաքականութեան, զոյգ եհաս և աջ Պատրիարք-
քական իշխանութեան Ս.ղգիս 'ի Կ. Պոլսոյ 'ի նեմ վայրիս
Հայաստանեայց ։ և լուսաւոր օրինօք և իրաւամբ ասաց
կառավարել զամենեսեան իբրև արդարև միակ եկեղեց-
ւոյ միակերպ որտիւք ։

Յայնմ միջոցի կալաւ զՂթոռն Ս.ղթամարայ Գաբրիէլ
եպիսկոպոս Վասպուրականի, անուամբ՝ և ոչ օծմամբ
կարգեալ Կաթուղիկոս ։ Ապա այն ինչ աչք 'ի յաւիտենից

գոգցես մթացեալք՝ ցանկային տեսանել զլոյս օրինաւորութեան և բարեկարգութեան, ասա հասին չարիք առաւել, և թանձրացաւ բարդեցաւ խաւարն իբրև 'ի վերայ անդնդոց, քանզի 'ի նոյն ժամանակ Պետրոս Պիւլպիւլն մականուանեալ օծաւ Կաթուղիկոս Աղթամարայ, 'ի միոջէ և եթ եպիսկոպոսէ թորոս կոչեցելոյ, որ 'ի Մակաբայեցւոց վանից. արհամարհեալ զկանոնս Ս. Եկեղեցւոյն, և զհրամանս և զիրաւունս Աղգին, հաճութիւն Աղթամարցւոց միայն կալեալ ինքեան՝ փոխանակ ամենայնի։ Բայց զիա՛րդ և ինչ Պետրոս այս տանէր ըստ բաւականին զկառավարութիւն Աղթամարայ և ժողովրդեան. շատ բարբարոսք դողային 'ի նմանէ, շատ ևս այն էր զի հարուածս և դատաստանս կրէին 'ի ձեռաց նորին. առնէր խնամս աղքատաց. չէն պահէր զտունն, և անիրաւասէր ոք էր և խոշորակեաց. սակայն 'ի բանս և, յիրս կարի ճարտար. ունել ունէր և պակասութիւնս, այո՛, զոր ոչ կարեմք արդարացուցանել։ Այլ զսա չկարացին ընկճել՝ ոչ ձեռք և սպառնալիք ահարկու Փրդաց մեծամեծաց, ոչ դեղ մահու՝ արբուցեալ նմա յՊատան, զոր և թափեաց անդրէն, ոչ այնչափ վշտակրութիւնք և աքսորանք և տուգանք և պէս պէս տանջանք, զորս յառաջագոյն կրեալ էր. սակայն ընկճեցաւ և եթ 'ի հարազատէն իւրմէ խաչատուրէ, որ ինքեան իսկ էր ձեռնատուն, և զամենայն վերակացութիւն կառավարութեան նմա հաւատացեալ։

Արժան համարիմ՝ ասասնօր զարտուղել 'ի կարգէ պատմութեանս և սակաւ ինչ տեղեկութիւնս գրել վասն խաչատուրիս այսմիկ, առ 'ի ճանաչել լաւապէս զնա, քանզի մեր բանք որպէս և նիւթ գրութեանս յաղագս խաչատրիս են։

Սա յառաջագոյն 'ի մանկութեան իւրում եկեալ յԱղթամար ծառայէր յոտս Պետրոս Պիւլպիւլին և ինքն իսկ էր 'ի Գաւաշու (որ է հին Ռշտունի), 'ի գեղջէն Բողոնիս, մօտ յԱղթամար. ապա 'ի դիպել տարադրիլ Պետրոս Պիւլպիւլին յԱղթամարայ, խոյս տայ և խաչատուրն 'ի կտուց Անապատն. ուստի և յետ աւուրց՝ երեք միաբանք աշխարհականք կտուցայ՝ միականի Յովսէփի Պօլսեցի, Մանուկ Մոկացի, և Մինաս Կորճեցի, առեալ ընտ իւրեանս զայս պատանին նորահաս մատաղ՝ զխաչատուրն, դիմեն 'ի Ս. Էջմիածին, և վարդապետք Էջմիածնայ հանեալ 'ի ձեռաց կտուցուց զխաչատուրն՝ պահեն առ ինքեանս, սիրելով և խնամ տանելով նմա իբրև որբոյ և արժանագունի սիրոյ։ Նազլուխան անուանեալ վարդապետ ոմն Ս. Էջմիածնի, ակնաւոր 'ի ժամանակին, կացուցանի տեսուչ Ս. Հռիփսիմեանց վանից, և խաչատուրն ծառայելոյ 'ի պէտս երիցայ ընդ Նազլուխանին, յետ ժամանակաց վախճանի Նազլուխանն և գումարք դրամոց նորին մնանեն 'ի ծոց խաչատուրին։ Նոյնպէս յաջողի կրկին ծառայել խաչատուրիս Յովհաննէս եպիսկոպոսի ումեմն, և 'ի մեռանել եպիսկոպոսին՝ մեծ մասն հարստութեանց նորին թաղուցանէ խաչատուրն 'ի ծոց իւր։ Ասացելոցս վկայ գտանեն թերևս ցայսօր 'ի Ս. Էջմիածին միաբանք այնմ ժամանակի որք կենդանի մնացեալ են և քաջ տեղեակ ամենայնի այսոցիկ, որոցս յաղագս և քննութիւնք ոչ սակաւ բացեալ են։

Յանցանել աւուրց, անցանէ և խաչատուրն 'ի Ս. Էջմիածնայ և գայ հանդչի բեռնաւորեալ ոսկով՝ յԱղթամար, ձեռնադրի վարդապետ 'ի Մարգար յեպիսկոպոսէն Հիզանու, և յայնմ օրէ ոսկի՝ իւր առնեն

զինքն պատուաւոր և յառաջադէմ 'ի կարգի Միաբանացն։ Այլ մերն Խաչատուր՝ որ գիտելով յափշտակել զոսկիս, գիտաց և զերծուցանել լծաղուցանել, և ուր ինքքն էր և անդ և զոսկիս բերել հասուցանել, գիտէր նա և զայն աճեցուցանել. քանզի տուեալ մասն մասն 'ի վաճառականս վան քաղաքի, գնալով բազմապատկեցաւ գումարն, և հարստացեալ, և առ քաղաքացիս և առ քաղաքականս այսու աղագաւ յարաբերութիւն կցեալ ձեռն էարկ վարձակալութիւնս վարձել (թաշիր, աղնամ, ևն) արքունի հարկաց գաւառացն և գիւղօրէից մերձակայիցն Աղթամարայ, և այսպէս թէ գանձ երկրին և թէ սանձ առ հասարակ բնակչացն 'ի ձեռին էառ Խաչատուրն։ Արդէն յինքն էր Աղթամարն։ Հայեցեալ 'ի յաջողութիւն բաղդին իւրոյ, սկսաւ ձեռնարկել յայտնապէս յԱթոռ և յիշխանութիւն կաթողիկոսութեան Պետրոս Պիւլպիւլին, որում ցանկայրն 'ի վաղուց, և թէպէտ ինքն իսկ էր վարող զայն իշխանութիւն յաւուրս Պետրոս Պիւլպիւլին, բայց զի՛ արդ և ի՞նչ կաթողիկոսական անունն և ձեռք Պետրոսին միշտ ակնածելի թուէր 'ի վերայ իւր։

Եւ եղև այսպէս.— Յաւուր միում Խաչատուրն ներտեալ ընդ Միւսիրին և ընդ Ղասին Գաւաշու, և ընդ Տաւրիշ Պէյին՝ որ եղբայրն է անուանի բռնակալ Քիւրդ Խանմահմուտին, և ընդ այլ մեծամեծս Աղլաղեաց հանդերձ բազմաթիւ ժողովրդականօք և միաբանութեամբ վանիցն՝ յայգին Աղթամարայ, յեղերս 'ի ցամաք ծովուն, և այգին կոչի Ախալանք, ուր շինեալ կայ և ադարակ մշակութեան Աղթամարայ, և տուն՝ ուր նստի կաթողիկոսն և կառավարէ զերկրագործու-

թիւն վանիցն, և զթեմական ժողովուրդս. տեղի բաւական զուարճալի և ծառաւէտ։ Անդ ընդ բազմեալսն բազմի և Պետրոս Պիւլպիւլն։ Եւ ահա 'ի նոր գեղջէ Հայք երկու, Յարութիւն և Սիմոն դարբին, մատուցան առաջի ատենին 'ի դատ յաղագս արտի միոյ, խաչատուր Յարութիւնին տայր և Պետրոս Պիւլպիւլն՝ Սիմոնին զերաւունս, և 'ի Ջերմանալ յերկուստեքէ բանիցն և ձայնից, դարձաւ խաչատուրն յայնմ հրապարակի ասաց զՊետրոս Պիւլպիւլն թէ՝ «դու զքոյր դարբին Սիմանին սիրես, վասն այնորիկ և զարտն նմա հատուցանես»։

Յարիւն եռաց Պետրոս Պիւլպիւլն յամենեցուն և 'ի ցաւոց արտին՝ վասն բանիս այսորիկ, բայց և ոչ պակաս ինքն եւս զխաչատուրն խայտառակեաց, անասելի չարիս և մեղս յիշելով. զորս ասէր գործեալ նմա, և ապա մեկնեալ Ախալանից՝ Տանէն Աղթամարայ՝ գնաց յՈստան 'ի վանս Զարահան Ս. Նշանին, ուր Հիրիմ Ս. Եղիշէի թարգմանչին է՝ առ Տէր Սարգիս քահանայն վանիցն, որ մտերիմն էր ինքեան, սփոփիլ անդէն։

Իսկ խաչատուրն ժողովեալ զկառավարիչս երկրին Տաճկաց երևելիս, ոգիս աւելի քան զքսան, որոց գլխաւորքն են, Զէրքէզ Մէհմէտ՝ Միւտիր գաւառաց, Մօլա Ավամատ՝ Ղատի, Տաւրիշ Պէյ՝ եղբայր խան Մահմուտին, և Օսման՝ որդի Փէլէշ աղային են. զսոսա առեալ ընդ իւր տարաւ 'ի բուն հայրենիս իւր 'ի Բողոնիս գիւղ 'ի տունն հօր իւրոյ, և զոր ինչ խորհեցանն՝ խորհեցան, մեք զայս և եթ իմացաք, զի յետ երից աւուրց դարձաւ այն հանդէսն 'ի Բողոնիսոյ յԱխալանքն Աղթամարայ վերատին.

Զժողովին վերոյգրեալոց 'ի խորհուրդս, և զվերա-

դարձ նոցա լուեալ Պետրոս Պիւլպիւլին՝ փութացաւ դարձաւ և ինքն յՍխալանս։ Ապա խաչատուրն զոմանս 'ի միաբանէցն Եպիսկոպոս և Վարդապետ, որք համախոհ էին ինքեան, հնարեաց առաքեաց 'ի թիմական գաւառս, 'ի մէջ ժողովրդոց շրջել, իբր թէ զհասս և զտուրս վանէցն հաւաքել, այլ բուն միտք իւրեանց այն էր զի զզուեցուսցեն զսիրտ ժողովրդականացն 'ի վերայ Պետրոս Պիւլպիւլին, և հաճեցուսցեն զի խաչատուրն օծցի Կաթողիկոս։

Եւ ինքն իսկ խաչատուրն դրեալ գիր ամբաստանութեան գանգատ 'ի վերայ Պետրոս Պինլպիւլին առ իշխանն Վանայ և առ Սառաջնորդն Իգնատիոս Եպիսկոպոս, հնարս հայցէր թէ զի՞նչ պարտիմք առնել սմա, զի ապրեսցի Աթոռն 'ի նախատանաց և յաւերմանէ, ապրեսցին և ժողովուրդն 'ի դարշելեաց սորին։ Որպէս թուի՝ կանխաւ արդէն բանս եղեալ էին ընդ միմեանս խաչատուրն և վանեցի իշխանք դրամառուք խաչատուրին՝ առ որս գրէրն, վասնորոյ աճապարեաց գրեաց պատասխանի Իգնատիոս Եպիսկոպոսն, առ խաչատուրն առ Ղազարն և առ Յակոբ Եպիսկոպոսունս, զոր և ես աչօք իմովք ընթերցայ, միտք գրոյն էր այս ինչ։

. . . . „Զար ինչ առնէք զուք, մեզ և իշխանաց „մերոց հաճոյ են. բայց և զայս ասեմք յազագս Պետրոս „Կաթողիկոսին, պատրաստեցէ՛ք նմա խուց մի 'ի կղզին, „և մուծէ՛ք զնա անդ, եռեալ նմա արդեալս մի՛ երանել „երբէք արտաքս 'ի խցէն, հաց և ջուր մատուցէ՛ք նմա, „անդ կացցէ և զլոյս մի՛ տեսցէ, մինչև լցցին ժամա„նակն ապաշխարութեան նորա։ Եթէ խոնարհեցաւ „ձեզ, և յանձն էառ զայս կանոն, բարւոք, ապա թէ

«ո՛չ՝ ազգ արասջիք մեզ, ինչանօք հանդերձ ունիմք
«զարժանաւոր խայտառակութիւն խայտառակել զնա, և
«զՁեզ՝ զՍիրելիսդ մեր պսակել ըստ վաղեմի փափագա-
«նաց և խորհրդոց ձերոց. եթէ այլ կերպ յաջողութիւնք
«կան 'ի միտս Ձեր՝ 'ի գործ դնել մի՛ դանդաղիք, վաղ-
«վաղակի կատարեցէ՛ք, և անհոգ կացէ՛ք, մեք Ձեզ
«պաշտպան եմք և արարոց Ձերոց հաւան . . . . ողջ
«լերուք»։

Զայս գէր ընկալեալ խաչատուրն և բանիցն 'ի վե-
րայ հասեալ, սկսաւ այնուհետև համարձակ և անվե-
հեր ձեռն 'ի գործ արկանել, առաքեաց կոչեաց զԽի-
զանցի Յակոբ Եպիսկոպոսն 'ի Հայոց ձորոյ՝ զգլխաւոր
գործիքն ամենայն եղեռնագործութեանց իւրոց, զոր և
ինքն էր արձակեալ 'ի նոյն գաւառն՝ վասն բանին զոր 'ի
վերս գրեցաք. երբոց նմա զգիրն Իգնատիոս Եպիսկոպո-
սն, խորհեցան վաղվաղակի երթալ 'ի Կղզին և օծանել
զխաչատուրն Կաթողիկոս. անդ էր և Ղազար Եպիսկո-
պոսն, զոր 'ի միասին առին տանել 'ի ներքս, պատրաս-
տուեցաւ նաւակն 'ի նաւահանգիստն։ Յայտնի եղև Պետ-
րոսի Պիւլպիւլին բանքս, փութացաւ և նա իջոյց զան-
կողինն իւր 'ի ծովեղերն՝ մտանել և ինքն 'ի նաւակն, և
թէ հնար էր՝ յառաջել քան զնոսա, առ 'ի պաշտպանել
և չ'տալ յափշտակել զԱթոռ իւր 'ի կենդանութեան իւ-
րում։ Իսկ ոչա ակնարկի արարեալ նաւավարին հե-
ռացուցանել եռուն զնաւակն 'ի տեղւոջէն յայլ տեղի,
կիսով ժամով չափ հեռի, զնաց և ժամանեաց անդէն
և ծերունին Պետրոս Պիւլպիւլն, և աղաչեաց զնաւավա-
րըն, որում անունն էր Աբրահամ, տանել զինքն յառա-
ջագոյն 'ի նաւակն. այն ինչ Աբրահամ բարձեալ 'ի շա-

լակի զերրորդ՝ աստիճանն կոխէր սանդուխին հանելոյ զՊիւլպիւլն 'ի նաւակ, հասին 'ի վերայ երեք Եպիսկոպոսունք ապաստաւորօք իւրեանց բիր 'ի ձեռին, և աղաղակեալ անարդս բառբառով, և Խիզանցի Եպիսկոպոսն Յակոբ՝ ձեռն ձգեալ քարշեցին յետս զՊիւլպիւլն, որ գլորեցաւ 'ի Ջուրս ծովուն, ողջ անձն ջուր դարձաւ ծերունւոյն, և ջուրք աղի 'ի ցամաքեալ աչացն արտասուէին, որ պաղատէր կողկողագին և ասէր. «մի՛ աստ, սիրելիք իմ, մի՛ աստ, այլ 'ի ներքո 'ի դրան տաճարին «տարէ՛ք և ապանէ՛ք զիս, գէթ աչկունքս մի՛ մնասցեն «կարօտ Ս. Յաճարին, որում ծառայեալս եմ 'ի մանկու«թենէ հետէ, և մարմին իմ հանգիստ գտցէ անդ 'ի «գերեզմանիս, զոր ձեռք իմ պատրաստեալ են անտէն, «անդ տարայք զիս, աղաչեմ զձեզ, գոնէ զհոգեւոր «թոշակն իմ առիցս, և ձեզ մի՛ համարեսցի Տէր 'ի մեղս զարիւնն իմ» . . . . . .

Ս.յսպիսի բանից և 'ի սրտառուչ ցաւոց և թշուառութեանց ողորմելոյն՝ չ'անկաւ գութ երբէք 'ի սիրտ անարտիցն. չանսացին տառապելոյն, այլ նզովս և հայհոյանս տեղացեալ նմա՝ թ.քանէին, և քարշեալ 'ի Ջրոյ 'ի լերայ աւազոց էքրև կիսամեռ. մինչ նա հեկեկայր, մըտեալ ին.քեան.ք 'ի նաւակն՝ անցնեն 'ի ներքս, և յայնմ գիշերի օծեն զխաչատուրն 'ի Կաթուղիկոս 1765 ամի յամսեան սեպտեմբեր։ Ոչ ընտրութիւն 'ի միաբանից և ոչ հաճութիւն 'ի թեմականացն առեալ, ոչ հրաման յՊ.զգայն կեդրոնական վարչութենէն, և ոչ ոք ներկայ գտաւ 'ի հանդիսին գոնէ։

Ի գիշերին յորում գլուխն խաչատուրին օծանէր իւղով, և անձն նորին զարդարեալ ոսկեճամուկ զգեստիւք

կաթուղիկոսական փառաւորէր, դաւազան կալեալ 'ի գահոյս բազմէր 'ի տաճարին, 'ի նմին պահու և գլուխ Պետրոս Պիւլպիւլին յափունս ծովակին արիւնս հոսէր, անդ մնայր զգիշերն ողջոյն, մրմնջէր 'ի ցաւոց, և ալիք ծովակին և ձայնք ջրային զեռնոց արձագանք նմա տային, այսպէս նահատակեալ ողորմելին մինչև ցայգ. ապա միայնակ ելանէր 'ի գիւղն Փշավանք. և յախուռի նէ՛թոյեան Մանուկին երթեալ ընկողմանէր։

Ինոյն միջոցի վանահայրն Կուռց Ս.նապատի Պօղոս վարդապետն եկն անցանել 'ի կողմանս Կարճկանու յաղագս պէտոյից ինչ նոյն Ս.նապատին, և տեսեալ զաղետալի վիճակ Պետրոս Պիւլպիւլին և իրաղեկ լեալ թէ խաչատուրն ևս գնացեալ է 'ի ներքս օծանել կաթողիկոս, խորհեցաւ երթալ 'ի ներքս, և եթէ հնար է արգելուլ զնոսա յայն ձախողակ իրէն։ Բայց քանզի առ հասարակ նաւակք Ս.ղթամարայ 'ի կղզին տարեալ էին՝ զի մի ոք եկեալ խափան լիցի ինքեանց, վասն որոյ էանց Պօղոս վարդապետն և գնաց դիւր ճանապարհն։

Չշատացեալ խաչատուրին օծմամբ և երթ, ձեռն էարկ և կողոպտեաց զփակեալ սենեակ Պետրոս Պիւլպիւլին, տարաւ 'ի խուց իւր զամենայն՝ մինչև զվերջար և զփիլոնն։ Իսկ զարկղ ոսկւոյն եռ տանել 'ի տաճարն և պահեաց 'ի խորան միւռոնին՝ կնքեալ զբերանն։ Բանք բերանոյ Պետրոս Պիւլպիւլին են, թէ 366000 դրշ. դրամ ունիմ ծրարեալ յարկեզս 'ի սենեկի իմում։ Գիտէր խաչատուրն թէ յետ օծանելոյն, բազումգանձք պիտին վասն քաւութեան անձինն իւրոյ, գիտէր անշուշտ թէ և յաղագս արեան Պետրոսին՝ զոր հանդերձեալ էին հեղուլ նոյնպէս պիտին շատ գումարք առ 'ի քաւելոյ

զայն, և ըստ իւրեանց կարգադրութեանց արդէն մեռ-
եալ համարելով զՊետրոսն, յափշտակեցին զինչս նորին
կենդանւոյն, և ոչ այսչափ միայն, այլ և քանի քանի
դումարատէր անձանց վախճանելոց յառաջագոյն 'ի կըղզ-
ւոջն, ծրարք դրամոց յինքն կորզեալ ունէր՝ նախատե-
սութեամբ պահեալ այսպիսի աւուրց 'ի պէտս, և ար-
դարև անթիւ հարստութիւնս դիզեալ էր։ Թերևս այս
մասն բանի մերումս անհաւատալի և չափազանց կարծ-
ցի քննաքանից, սակայն բացցին միանգամ զաչս իւրեանց
'ի հեռաւորս և 'ի մերձաւորս տեսանել թէ 'ի չորից ա-
մաց հետէ ուստի՞ են այնչափ արծաթ և ոսկի՛ք, զորս
տեղայ և շարունակ տեղայ 'ի ծոցս ծոցաւորաց, մինչև
բեկորք ոսկւոյ նորին հասին արդեօ՞ք և անցին անդր
քան զԿ. Պոլիս ճանապարհորդեալ 'ի դրանցն Աղթամա-
րայ, 'ի Վանայ, 'ի Կարնոյ, և յայլ և այլ շաւիղս զորս
ինքն ինքն գիտէ. և ուստի՞ ուտէ և յղփանայ օր քան
զօր յաւելեալ զճենճերս փորոտեացն.

Եհաս բան առ Պետրոս Պիւլպիւլն թէ կողոպտեաց
սենեակն և ամենայն ինչ իւր, որ արդէն մարմնով վի-
րաւորեալն էր 'ի վերայ աւազոց, և հոգւով՝ 'ի վերայ
օծման խաչատուրին, նորոգ վիրաւորեցաւ 'ի ցաւս ան-
հընարին, և 'ի բորբոքմանէ սրտին յարուցեալ կաղմեաց
զանձն 'իվաղուն երթալ'իվան՝ բողոքելվասն ամենայնի այ-
սոցիկ առ Ազգային իշխանս, առ առաջնորդն և առ
քաղաքական կառավարութիւնն։ Սակայն քաղաքն Վա-
նայ կանխաւ արդէն ձայն առեալ եղելոցս՝ 'ի կողմանէ
կառավարութեան զօրականք ոմանք եկին հասին յԱղ-
թամար տանել զՊետրոսն և զխաչատուրն միանգամայն
'ի քաղաքն, վասն այսորիկ եկեալ զօրականք ընդ գա-

ւաշու Միւսիւրին նաւ կալեալ մտին 'ի կղզին բերել ըզ-
խաչատուրն և զորս ընդ իւր արտաքս . բայց խորագէտ
հնարք խաչատուրին յապաղեցուցին զնոսա զաւուրս եր-
կուս մնալ 'ի կղզին , և մինչ նոքա անդ էին , և պատուօք
պատուէին , Պետրոսն՝ որ լուեալ էր զգալ զօրականացն .
'ի քաղաքն դնալոյ յեռաս կացեալ՝ մնայր նոցա . և 'ի վերջ-
ին գիշերին երկուց աւուրցն ապանաւ յանկողնի , յախո-
ռըն նէմոյեան Մանուկին 'ի փշալանց գիւղ , ուր ան-
կեալն էր :

Եւ եղև այսպէս :

Խաչատուրն 'ի մտանելն 'ի կղզին թողեալ էր արտաքս
զՀաւատարիմ ապասաւորն իւր զԲիւրդ Եիւսիւֆ , ասե-
կեալ 'ի գիշերին 'ի վերայ տանեաց Նեմոյեան Մանուկի
ախոռին հանդերձ ընկերօքք , և յերդեացն Հայեցեալ զին-
ենջէր Պետրոս Պիւլպիւլն և ճրագ 'ի մնարէից տուրա Վա-
ռէր , եւ մոխց տեղւոյն զգուշացեալ տրադ 'ի
յերդեացն ուղղեալ նշանս կալեալ 'ի կողս [illegible] դէ-
պերցուցանեն զդնաակն , և ինքեանք խոյս տան 'ի տեղ-
ւոջէն : Անկաւ շշուկ և շփոթ 'ի գիւղն տարածեցաւ ա-
ղրադ արագ համբաւն 'ի շրջակայս , լուան որ 'ի ներքս 'ի
կղզին էին թէ ապանաւ Պետրոս Պիւլպիւլն , և ընդ ա-
ռաւօտս վաղվաղակի բազմութեամբ միաբանից և Ցաճ-
իկական խմբից եկ արտաքս խաչատուրն , և հասեալ ա-
մենեցուն 'ի փշալանս , զարդարեալ խաչատուրն կաթո-
ղիկոսական զգեստիւքն աթոռս արկեալ 'ի վերայ տան-
եացն բազմեցաւ , և շուրջ գիւրեաւ Ցաճիկքն , և առ
հասարակ բազմութիւն արանց և կանանց , ծերոց և տղ-
ղայոց լցեալ կային , Հրամայեաց խաչատուրն և բերին

առաջի զդի սպանելոյն մերկ։ և կապուտ, ըստ կարծեաց կարծեաց հանէին կարծիս, և դիտէին զտեղիս հարուածոցն, քարշէին յայսկոյս յանկոյս փողոցին, 'ի մէջ աղբևաց ըզդիակն, և անամօթ ոմանք 'ի վարդապետացն դլուխս շարժեալ 'ի վերայ հայհոյէին, նախատէին և թքանէին 'ի նա, ձայնակից սոցա և գործակից լինէին այլազգիք ոմանք յանդր եղելոց։ Յայսպիսի անագորոյն աւսիլ, հանդիսին զուարճանայր գոգցեա խաչատուրն և Եպիսկոպոսք իւր և թողոյր այնպէս շարունակել, աչք բազմաց լային։ երեսք բազմաց ամաչեցեալ շառագունէին, և շատ այն էր զի 'ի խղճէ հարեալ 'ի վերայ այնպիսի նախատանաց զայրանային և մեղս դնէին, սակայն բնաւին անհոգ մընայր խաչատուրն և իւրքն. մինչև եղբայրն խան Մահմուտին Քիւրդ Տավրիշ պէյն յանդիմանեաց ասելով. "ո՛վ անաստուած և անամօթ մարդիկ, բաւական է, բարձէք զձեր մեռեալն, և տարայք արկէք կամ'ի ծով կամ 'ի հող դերեզմանի"։ Եւ ապա բարձեալ զմերկ մարմին սպանելոյն տարան 'ի կղզին, եդին 'ի հող տապանի, զոր ինքն իսկ էր պատրաստեալ 'ի կենդանութեան իւրում. քանզի այս սովորութիւն է կաթուղիկոսացն Աղթամարայ պատրաստել վաղագոյն զդերեզմանս. գոգցեա գիտելով թէ մօտ է ինքեանց մահ յետ կաթողիկոսանալոյն, զի մինն 'ի միւսէն տեսեալ ուսանի զիւրն։ Այսպէս հողածածուկ արարին զդիտկն՝ առանց բանի աղօթից և կարգի կատարելոյ։

Երանի՜ թէ այսչափ և եթ լինէր իրացն շարունակութիւն, այլ տակաւին 'ի նորոյ սկսանի բանիլ դուռն մեծ և վտանգ ահագին եղեռանց։ Կարդ բանին արդէն քարոզէ այնոցիկ՝ որք զբանս գիտեն. թէ խաչատուրն եւ

սպանանել զՊիլպիւլն. քանզի 'ի կենդանութեան նորա օծանել. ինքն 'ի ներքս մնալ, զզօրականս առ ինքն պահել, զիւր հաւատարիմն Քիւրդ Իսիւֆ 'ի դուրս թողուլ. զսենեակ Պիւլպիւլին և զարկղն կողոպտել, այս ամենայն յայտնի ապացոյցք են։ Եւ թէ զի՛ւրդ կարէր խաչատուրն ապրիլ և վարել զիւր պաշտօնն՝ եթէ կենդանի մնայր Պիւլպիւլն։ Յայտնէ և այլ այսպիսի բազում պարագայից ակներև ցուցանի թէ ձեռն խաչատուրին թաթաւեալ է արեամբ Հօր իւրոյ Պիւլպիւլին, և 'ի գլուխ իւր ընկալեալ ունի ոչ զիւղն սրբութեան, այլ հեղումն արեան Պիւլպիւլին։

Ապա անդ 'ի տանիսն Փշավանից բաղմի իբրև դատաւոր խաչատուրն հանդերձ իւրայնովքն, և տայ քերել զառաջեաւ և կապել զոտս ի ձեռս եօթնեկի աբրանց անմեղաց, և 'ի գլուխ որդւոյն եղբօր Պիւլպիւլին՝ չարաչար կոտանս և տանջանս ածեալ, մինն ուսուցանէ, և միւսն սատէ, մինն սպառնայ, և միւսն ինչս խոստանայ, զի յանձն առնուցու եղբօրորդին ասել թէ. «ես սպանի զՀօր եղբայրն իմ զՊիւլպիւլ»։ Իսկ ողորմելին զմի և նոյն բան աղաղակէր և ասէր. «ես ոչ սպանի. այլ մանաւանդ թէ զարիւն հօրեղբօր իմոյ խնդրեմ»։ Մատամբ ցուցանէր զխաչատուրն և զՅակոբ Եպիսկոպոս խիզանցին։ — թէ սոքա են պարտապանք արեան, սոքա հրամայեցին Քիւրդ սպասաւորաց իւրեանց, որք սպանին զՀօրեղբայրն իմ։

Իբրև տեսին թէ չկարեն զխաբէութիւնս իւրեանց յառաջ տանել, և թէ հեռզհետէ խառնի ժողովուրդն 'ի տեղւոջն և ձայնք բաղմանան. յահարկութիւն ամենեցուն կալեալ, կապեալ առաքեցին 'ի Վան քաղաքն զնէթոյ-

եան Մանուկն, զծերունի Տէր Գրիգոր Քահանայն Փշաւանից, զՅակոբ Վարդապետն 'ի նոյն գեղջէ, զԽաչատուր եղբօրորդին սպանելոյն զՂազար՝ որդին Ռէս Եղոյի նոյն գեղջ և զԲիւրդ Խաչն՝ Հորեսան սպանելոյն, և կաղ Խաչիկն, երբ թէ սուքա 'ի նմին գիշերի առ ընթեր Պիւլպիւլին էին ննջեալ, յորում սպանաւ նա, վասն որոյ տարան յատեան կառավարութեան, զնացին և քանի եպիսկոպոսունք և վարդապետք ընդ նոսա 'ի կողմանէ Խաչատուրին՝ արկանել զՊիւլան 'ի վերայ եօթանցն. կնքեցին և զդուռն տան եղբօր Պիւլպիւլին, երբ թէ անդ պահեալ են ինչք սպանելոյն, մինչև ապդ արասցեն կառավարութեան և առաջի նոցա բացցեն զդուռն։

Օրդ հասեալ գնացողացն 'ի վան, մտին յատեան կառավարութեան, յորում ժամանակի էր կառավարիչն վանայ Աբդուլլահ փաշան, որ և ցայժմ վարէ, այր իմաստուն և արդարատէր, առ որ ժողովեալ նստէին ղատին, և առ հատարակ երեւելիք Տաճկաց և Հայոց անդամք կառավարութեան։— Նայեցեալ փաշային յերեսս կապելոցն, և տեղեկացեալ 'ի բերանոյ կուսակցացն Խաչատուրին թէ «կապեալքս այսոքիք են պատճառք սպանման Պիւլպիւլին, յատկապէս զեղբօրորդի Պիւլպիւլին զԽաչատուրն ցուցանէին, վասն որոյ և խոհականութեամբ և ամենայն քաղցրութեամբ սկսաւ փաշայն հարցանել նախ զԽաչատուրն զայն։

"Այա՛ քեզ որդեակ, համարձակութեամբ ասա՛ և մի՛ երկնչիր, զի մեռեալն մեռաւ, թէ արդարն զո՞ւ սպաներ, օրէնք զքեզ չ'դատեն, զի արիւն քո էր, ասա՛ միայն զճշմարիտն, զի աղատեսցին այսչափ անմեղք

'ի դատաստանէ, և մեք քեզ ոչինչ ունիմք ասել։ Զայս ասէր փորձելով։

Իսկ խաչատուրն պատասխանի տարձակ ասէ, «Երդարև զճշմարիտն՝ զոր դիտեմ, ասացից, ոչ ես Ցէր իմ, և ոչ ոք 'ի կապելոցս, այլ որք եկեալ են դատապարտել զմեզ։— Զայս ասէր և մատամբ ցուցանէր զեպիզանցի Յակոբ և զիսպարտ Եպիսկոպոսունս, ասքա և ընկերք ասցին եռուն ապանել զՀօրեղբայրն իմ, և քանզի ասքա են որ այնչափ թշնամանս իդին նմա 'ի կենդանութեան նորին, ասքա ընդ խաչատուրին միաբանեալ օծին զնա կաթողիկոս, մինչ կենդանին էր կաթողիկոսն, ասքա և զմեզ կամին տալ ապանանել, զի մի՛ զոր տեսաքն և դիտեմք վկայեսցուք, և արդ զոտս Ցեառն իմոյ հաստատեմ, պաշտպան անմեղութեան անձին իմոյ, և կապելոցս ընդ իս, զքեզ ապաչեմ, և զարիւն հօրեղբօր իմոյ շնորհիւ Ձերդ արդարութեան 'ի նոցանէ պահանջեմ։»

— Դարձաւ փաշայն և ասաց խիզանցւոյն։— Պատասխանատուութիւն մեծ գոյ 'ի վերայ Ձեր. և ես զի՞նչ ասացից հարցանողացն յինէն, ընդէր առանց հրամանի կաթողիկոս օծէք, և այսպիսի չար հեռանս 'ի վերայ ձեր ածէք։ Զի՞նչ ունիս ասել, ասա՛։

— Ասէ խիզանցին։— Օծանել կաթողիկոս է գործ Ազգային և կրօնական, որոյ վերայ ոչ Դուք, այլ ՀԸԼԽԱՒՈՐՔ Ազգին մերոյ խօսեսցին ընդ մեզ։

— Ասէ փաշայն։— Իրաւունս ունիմ տեղեկանալ վասն ամենայնի, քանզի ինդիր արեան է. յաւենի իմում հասեալ կայք, պատմեա ինձ զսոյքն և զկատարելն, քանզի տեսանեմ զի օծումն խաչատուրին եղեալ է պատճառ և հեռանք մահուան Պետրոսին։

— Ասէ խիզանցին։ — Մեք առէաք զՊիւլպիւլն, վասն մեզաց և պղծագործութեանց իւրոյ, վասն որոյ օծաք զԽաչատուրն՝ Կաթողիկոս որսուրբ է, և թէ ոչ կամի զհետ մեր եկեսցէ, և ով ոչ կամի զհետ Պիւլպիւլին ընթացցէ։

— Ասէ փաշայն։ — Եւ զի՞նչ էին մեզք և պղծագործութիւնք նորին։

Ասաւնոր խիզանցին բացեալ զբերան իւր առանց ամօթոյ և խղճմտանաց այնպիսի զազիր բասրանս դնէր Պիւլպիւլին, մինչև զզուէին առ հասարակ լսողք Հայք և Ցաճիկք. և ասէին նմա թէ լուռ լե՛ր։ ։ ։ յաւել և զայս ասել թէ հայհոյէր բերանս և զօրէնս Ձեր Մահմէտականաց։

— Ղատին ասէ։ — Եթէ արդարև ճշմարիտ իցեն բանքդ, պարտ էր զերկուցանել կառավարութեանն կամ Մուրախասին կամ մեծամեծաց Ազգիդ։

— Խիզանցին ասէ, — Զդէմս վասանդին և չարեաց ոչ կարացաք առնուլ, երկեաք եւս գուցէ վնանքն և անձինք մեր յաղագս յանցանաց և բանից հայհոյութեանց նորին կրծանեսցին։

— Ղատին ասէ։ — Լաւ էր եթէ 'ի նղղին տանէիք, և կամ դեզ մահու նմա տայիք. և կամ քար 'ի պարանոցէն կախեալ 'ի ծովն արկանէիք, ապա օծանէիք ձեզ Կաթողիկոս նոր, այլ արդ ես չ'կարեմ զՁեզ առնել արդար յայսմ բանի։

— Փաշայն ասէ։ — Յանցանք մեծ են ձեզ, Եպիսկոպոսք, դուք զՅիերման Ցէրութեան իմոյ առ ոտն հարէք. զոր ունէր Պիւլպիւլն, դուք զնա արհամարհեալ 'ի պաշտօնէն հանէք, և առանց Ցիերմանի նորոյ և առանց հրա-

րամանի Աղդին ձերոյ Կաթողիկոս օծէք, և զարիւն Պիւլ-
պիւլին թափել եռուք յայտնի են բանք՝ եթէ ոչ էր
սպանեալ Պիւլպիւլն, ոչ կարէր իշխանութիւն վարել
խաչատուրին, ուրեմն ձեռք խաչատուրին են ընդ ըս-
պանողն Պիւլպիւլին։

Զայս ասաց և հրամայեաց որոշեցին վեց անձինս Ե-
րևելիս, երեքն 'ի Տաճկաց և երեք 'ի Հայոց, որք են,
Հագդի էֆէնտին, Խալրթ Պէյ, Մուշայ իւզպաշի, Ա-
խիջան աղայն Ղարասէֆէրեան, Մ. Վարդան աղայն
Կոսպարեան, և Փանոս աղայն Թերձանեան, զսոսա ա-
ռաքեաց 'ի Փշավանց դիւղն ուր սպանեալն էր Պիւլ-
պիւլն, և զկապեալսն և զերկեալսն անտի յեռս դարձուց-
եալ, պատուիրեաց ստուգութեամբ, և ներքին քննու-
թիւնս առնել 'ի նորոյ, և ինքն զոր ինչ լուաւ և տեղե-
կացաւ մինչև ցայն վայր փութացաւ գրեաց 'ի Կ. Պոլիս
'ի Բ. Դուռն։ — Եւ գնացողքն հասեալ 'ի Փշավանց,
ատեան կազմեցին քննութեան, անդ բազմեցաւ և խա-
չատուրն իբրև նախագահ ատենին, քանզի հաճեցոյց
զսիրտ եկեղցոյն և ընկալաւ պատիւ 'ի նոցանէ, անդ ա-
ռաջի բերեալ դարձեալ զեօթն կապեալս հարցանէին.
շատ չանայր խիղանցին համոզել զերդեօրորդին Պիւլպիւ-
լին զխաչատուրն զի յանձն առնուցու խոստովանել թէ
„ես սպանի զհօրեղբայրն իմ„, ասա՛ ասէր, թէ նա ա-
ստոյ սպան զիս և զարիւն իմ յԱղթամարցւոցն խնդրեա՛,
եթէ զայս ասասցես, զանձն քո, և զընկերս քո և զմեզ
ապրեցուսցես, և զվանքն յաւերմանէ զերծուսցես։ և
մեք լինիմք պաշտպան անձին քո, և տան քո, և քեզ
տամք զամենայն ստացուածս հօրեղբօր քո„։ Իսկ նա
յատենի կացեալ զոր ինչ յառաջն ասացեալ էր զնոցն

բան կրկնէր, և զարիւն սպանելոյն յեպիսկոպոսաց խընդ-
րէր։ Սպա հրամայեցին վէգս չորս քոմէշոց դնել 'ի
ճակատ ողորմելի խաչատրին և մաղեայ բարակ լարանով
պրկել և պտրել, զի խոստովանեսցի թէ «ես սպանի
զՊիւլպիւլն»։ Ճարճատեցան ոսկերք գլխոյն ողորմելոյն
և այտուցեալ 'ի ցաւոցն խատութենէ աչկունք և ե-
րեսք նորա, սկսաւ արիւն և արտասուք խառն հոսել
յականց, աղեկտուր լինէին տեսողքն, և կոշկոշէին առ
հասարակ սիրտ ամենեցուն, իսկ նոքա ասէին թէ ա-
սա՛ ես սպանի և աղատիս յամենայնէ։ Եղբարդին
Խաչատուր դարձեալ զնոյն բան ասաց, և հրամայեցին
կրկին պրկել զլարանն, մինչև 'ի կսկծմանէ դառնագին
ցաւոցն այսպէս ասաց «ես զնոյն դիտէի որպէս և ասէի,
բայց որովհետև չ'կարեմ այլ ես տոկալ տանջանացն,
ասեմ զձեր բան, թէ այո՛, ես սպանի զհօրեղբայրն իմ»։

Յայս բան ցնծացան ամենեքեան, հրամայեաց Խա-
չատուրն զի զկնքեալ դուռն տանն եղբօր Պիւլպիւլին
բացցեն, և զոր ինչ գտցեն արտաքս հանցեն. դիմեցին
առ հասարակ 'ի ներքս, բայց եղբարդին սպանեալ
Պիւլպիւլին չարչարեալն Խաչատուր, բողոքէր և ասէր,
'ի ներքս 'ի կղզին են ինչք և գանձք հօրեղբօրն իմոյ,
արձակեցէք զիս և ես երթեալ հանից զայն և տաց 'ի
ձեռս ձեր։ Ոչ ոք անսայ ձայնի նորա։ Սպա ասաց,
թողէք զիս, զի զժառանգութիւնն հօր իմոյ 'ի տանէ
իմմէ հանեալ տաց ձեզ, և մի թողուք աւար հարկանել
զտուն իմ։ Ոչ ոք անսաց բանին նորա։ Այլ առաւել ևս
սաստկացուցեալ զտանջանսն չարչարէին, տեսեալ մօր
Խաչատրին զտաղնապ որդւոյն, գնաց և երեր առաջի
նոցա գումարս 80,000 ղուրուշի, թող զրաղում ապրանս,

զայն գումար դրամոց բաժին արարեալ բաշխեաց խաչատուրն 'ի վերայ քննչացն եկեղոց 'ի քաղաքէն, որք կալեալ միւսանդամ զեօթն կապեալսն առեալ դարձան 'ի քաղաքն և եդին 'ի բանտի կառավարութեան, յորս էին նախայիշեալ փշավանցի Զակոբ վարդապետ և Տէր Գրիգոր ծերունի քահանայն։ Զայս ամենայն եղերութիւնս և զտանջանս՝ զորս տուեալ էին Երզնկայի խաչատուրին, Ղարաեէֆէրեան Սէխիչան Աղայն ինքնին բերանացի պատմեաց 'ի քաղաքին, նոյնպէս պատմէին և այլքն։ Եւ այժմ եթէ 'ի նորոյ քննեցի բանս, պարտս խղճի եղեալ 'ի վերայ նոցա՝ ունին թերևս վկայել ամենայնի։ Ներկայացուցեալ առաջի փաշային զբանս քննութեանն ոչ միայն զկապեալսն կասկածելի համարեցան, այլ առաւել քիւրդ սպասաւորն խաչատրոյ իսիւֆ և զընկերն նորին քիւրդ Շահին։

Իսկ խաչատուրն և խիզանցին, Սարգիս Եպիսկոպոսն և լուսարար Յովսէփ Եպիսկոպոսն, 'ի միասին գնացին 'ի կղզին, և առեալ ընդ իւրեանս զնաւավարն Սղթամարայ Աբրահամ՝ մտին 'ի տաճարն 'ի խորան Միւռոնին, ուր եդեալ պահէին զմին յարկեղաց Պետրոս Պիւլպիւլին, յորում էր գումար 366,000 ղրշ.ին, բացեալ զտակ արկեղն, և զարծաթ դրամն 24.000 ղրշ. տուեալ 'ի պահ լուսարար Յովսէփ Եդիսկոպոսին, զմնացեալսն ամենայն դեղին ոսկիս առեալ ընդ իւրեանս խաչատուրն և խիզանցին իջին 'ի քաղաքն վան, հաղորդել նոքօք ղայնոսիկ, որք ձեռնտու լեալ էին ինքեանց, և որք նպաստաւոր և պաշտպան լինելոց էին յապայ աւուրս . . . = խաչատուրն 'ի վանայ քարբիցայս և արճիճս դնեալ ծանրութեամբ ոսկւոյն՝ զոր հանեն յարկեղէն, առաքեաց 'ի կղզին, և

'ի ձեռն նաւավար Աբրահամին լցեալ զայն յարկղն ոսկւոյն, եւ բնեռել։

Յանցանել ինչ աւուրց, փաշայն Վանայ առաքեաց խնդրեաց 'ի Միւտիւրէն Գաւաշու զԲիւրդ Շահին և զԲիւրդ Իւսիւֆն՝ ապաստաւորս խաչատուրին զսպանողն Պիւլպիւլին, և նորա կալեալ առաքեաց առ փաշայն, զի քննեսցին. հասեալ նոցա 'ի Վան հրամանս խնդրեցին և գնացին նախ յԱռաջնորդարանն Հայոց առ տէրն իւրեանց խաչատուր, անդ կացին 'ի դիշերի, և պահապանք՝ որք բերին զնոսա գնացեալ յայլ տեղի ննջեցին զդիշերն։ Եւ ընդ առաւօտն հրամայեաց փաշան բերել զիւսիւֆ և զՇահին յԱռաջնորդարանէն իբրև եկին ոչ զոք գտին անդ, և հարցեալ լուան թէ 'ի դիշերի փախուցեալ են, փախեան և ինքեանք պահապանքն 'ի Վանայ, և մինչև ցայսօր ժամանակի ոչ ոք խնդրեաց՝ թէ ո՞ւր են Իւսիւֆն և Շահին։ Իսկ 'ի Փշավանիցն կապելոց և բանտարկելոցն Ծերունի Տէր Գրիգորն երկուցեալ խոթացաւ և արձակեալ 'ի բանտէն հասեալ 'ի տուն՝ վախճանեցաւ։ Մեռաւ և Ղազար որդի ուէս եղոյին 'ի բանտին։ Արձակեցին և զՅակոբ Վարդապետն։ Իսկ մնացելոցն վասն մի ոմն յազգասիրաց աղերս գրեալ 'ի Պատրիարքարանն 'ի Պոլիս, և ազդարարութեամբ Պատրիարքին ազատեցան և նոքա 'ի բանտէն։ Այսպէս ոչ միայն Պետրոս Պիւլպիւլն, այլ և Տէր Գրիգորն և Ղազարն ևս եղեն զոհ հնարից խաչատրին և խաչատուրեանց, թող զեղբօրորդին Պիւլպիւլին զխաչատուրն, որ յետ այնչափ չարչարանս և բանտս կրելոյ արձակեալ մեռաւ, զորմէ ասեն ոմանք թէ մահուամբ, և ոմանք թէ հրացանաւ հարեալ զրաւեցաւ, այլ զորա ճշմարիտն չ'գիտեմ ես։

Իսկ ապա զդալն Յարութիւն Եպիսկոպոսին կարնոյ և ընդ Իգնատիոս Եպիսկոպոսին Վանայ նորոգ և ուրպէս քննութիւնս առնել, և թէ զի՞նչ յեռ այնորիկ՝ չկամիմ գրել, որպէս և ոչ զամենայն հանգամանսն մանրամասն գրեցի, քանզի խիստ երկար և ցաւալի և տաղտկալի թուէին։ Ա.ՌԼ զայս և եթէ փութամ ասել, զի յեռ այսմ ամենայնի խաչատուրն փառաց ի փառս պատուէր յիշխանաց Վանեցւոց որպէս և յԻգնատիոս Եպիսկոպոսէն, և այսօր ընդ կաթողիկոսութիւնն Աղթամարայ վարէ և զառաջնորդութիւնն Վանայ։ Թէ քանի՞ վարդապետս ձեռնադրեաց և քանի քահանայս եռ ձեռնադրել անարժանս, յոյց զթէմն անկարգութեամբ, և զեկեղեցիս առ հասարակ արտասուօք և ամօթով. յառաջացան ամենայն անձինք չարագործք, և բարիք բարձան 'ի միջոյ, քանի պաւառք - գիւղք Հայոց յայսմ խռովութեան երեսաց տրօրեալ 'ի բարբարոս Քրդաց փախեան 'ի բնակութեանց իւրեանց, և Շեխն Հիզանու այժմ տիրէ և վարէ զՀայս և զեկեղեցիս որ 'ի նոսա, զբազումս 'ի հաւատոց հանելով։ Ասերմունք և խանգարմունք տիրեցին բազմաց վանօրէից, յորոց կարդի և մեծավարուն ուխտն Նարեկայ անչքացաւ անկեալ 'ի ձեռս յափշտակողաց և անարժանից։ Յանցելումն ամի եկեալ խաչատուրն յԱղթամար, զվիճակայինսն կեղեքեաց և երեր 'ի քաղաքն, և առաքեաց զխիզանցի Յակոբ Եպիսկոպոսն 'ի Կ. Պոլիս վասն քաւութեան և հաստատութեան ինքեան. և ոչ գիտեմք թէ զիա՞րդ հաւանեցաւ վարչութիւնն Կ. Պոլսոյ տալ տեղապահութիւն Աղթամարայ՝ խիզանցւոյն. որ զլխաւոր առիթ և գործիքն է այն ամէն եղեռնագործութեանց, զոր և հաստատեաց յատուկ կոնդակ Պօղոս Սրբազան Պատրիարքին։ Մեծացուցեալ զիշխանութիւն

ՀՀ Ազգային գրադարան
NL0257041